ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> ----------հուլիսի----------2025թ. Ն ՄՈ/690 - Ա
ք. Արմավիր

«ԱՐՏԻՄԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԺԱՆՆԱ ԴԱԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և ժաննա Դալյանի 2025 թվականի հուլիսի 14-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ժաննա Դալյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 15-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ժաննա Դալյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Խոյլունցին:

3. «Արտիմետի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Շուշանիկ Խոյլունցի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 28-ից օգոստոսի 15-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Ժաննա Դալյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025.07.15 09:23:03 GMT+4
Ստորագրված է էլեկտրոնային նույնականացմամբ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Բ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ